





# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆՏԱՆԻՔԸ ...

Շարունակուած Ա. Էջէն

կայաններուն մէջ «Ալ Քայիտա»ի անդամներու ներկայութեան մասին հարցումի մը պատասխանելով, Մուֆթի ըսաւ, որ պէտք է վստահիլ իրանական պետութեան ու անոր պաշտօնական մարմիններու հերքումին: Ան հաստատեց, որ իսրայէլեան սպանալիքները ուղղուած են նաեւ իսրայէլեան արաբական նախաձեռնութեան եւ Լիբանանի մէջ զբօսաշրջութեան դէմ:

Նախարար Համմուտ ապա ընդունեց սահական երկիրներու դեսպաններու ներկայացուցիչ Ֆիլիպեաններու դեսպանը, ափրիկեան երկիրներու դեսպաններու ներկայացուցիչը՝ Նիկերիոյ դեսպանատան գործավարը, Հիւսիսային Ամերիկայէն՝ Քանատայի դեսպանատան գործավարը, Հարաւային Ամերիկայէն՝ Պրագիլի դեսպանը եւ Եւրոպական Միութենէն՝ Միութիւնը գլխաւորող Սպանիոյ դեսպանը: Վերջինը յայտարարեց, որ հանդիպումը գումարուած է աշխարհագրական խմբաւորումներու ներկայացուցիչներու հետ, եւ նախարար Համմուտ հերքած է Հրկայալի սպանակներու միջամտութիւնը: «Ալ Քայիտա»էն տարբերու ներկայութեան մասին իսրայէլեան տարածայնութիւնները եւ պահանջը է օտար պետութեանց միջամտութիւնը՝ վերջ դնելու համար իսրայէլեան գրգռիչ արարքներուն, մասնաւոր Լիբանանի ժողովին եւ օդային սահմաններու խախտումներուն:

Եւրոպական Միութիւնը գլխաւորող Սպանիոյ դեսպանը ըսաւ, որ Եւրոպական Միութիւնը կը ձգտի Միջին Արեւելքի մէջ խաղաղութեան եւ կայունութեան հաստատումին եւ կը յուսայ, որ ասոր անհրաժեշտ պայմաններն ու տուեալները ստեղծուին հարաւային Լիբանանի եւ ամբողջ շրջանին մէջ:

Համմուտ նաեւ տեսակցեցաւ Ռուսիոյ դեսպան Պորիս Պոլոթինի հետ, որ յայտարարեց, թէ քննարկած են շրջանային վիճակն ու պաղեստինեան շրջաններէն ներս տիրող դժուարին պայմանները. ան մաղթեց, որ խաղաղութեան բանակցութիւնները վերսկսին բոլոր առանցքներուն վրայ, ՄԱԿի որոշումներու, Մատրիտի եւ Պէյրութի ժողովի սկզբունքներուն հիմամբ: «Կաշխատինք կանխարգիլելու որեւէ մագլցում. իսրայէլեան սպանալիքները մտահոգիչ են, բայց պիտուրական հարուած չենք նախատեսեր», ըսաւ ան:

## ՄԱՍԼՈՅ ԱՍՈՒԼԻՍ

Այս հանդիպումներէն ետք տրուած մամլոյ ատուլիսի մը մէջ նախարար Համմուտ նախատեսեց, որ ՄԱԿի Ապահովութեան խորհուրդը մօտ օրէն շարժումի մէջ մտնէ այս հարցի լուծման համար: «Միջազգային ընտանիքը պարտի սանձել իսրայէլը եւ վերջ դնել անոր թշնամական եւ յարձակողապաշտ ընթացքին», ըսաւ ան:

Նախարար Համմուտ դիտել տուաւ, որ իսրայէլեան սպանալիքներուն դէմ դիմանալու տակաւ հակապաղեստինեան ծիրէն ներս այս հանդիպումներուն ընթացքին նաեւ ներկայացուցած է սահմանին վրայ իսրայէլեան յաւելեալ ուժերու կեդրոնացման հարցը եւ պահանջած, որ միջամտեն այս գծով:

Ան յայտնեց, որ արտաքին գործոց նախարարութիւնը կը կազմակերպէ եւ կը պատրաստէ Լիբանանի մէջ օտար պետութեանց դեսպաններու շրջապատող մը՝ սահմանագիծին վրայ, թէ հոն յարուածութեան մասին յայտարարութիւնները իսրայէլեան սպանալիքներու ներքին են, որոնց նպատակն է վնասել Լիբանանի զբօսաշրջութեան եւ ներդրումներուն:

Ան յայտնեց, որ ՄԱԿի մէջ Լիբանանի ներկայացուցչութեան իր ստացած տեղեկութիւններէն կարելի է հետեւեցնել, որ Ապահովական խորհուրդին ալ յառաջիկայ ժամերուն պիտի սկսի այս հարցին գծով շարժումի մը:

# ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ԼԻԲԱՆԱՆԻ առեւտուրի, ճարտարարւեստի եւ երկրագործութեան գրասենեակներու համախմբումի նախագահ Ատնան Քասար երէկ իր գլխաւորած Պէյրութի գրասենեակի կեդրոնատեղիին մէջ տուաւ մամլոյ ատուլիս մը, որուն ներկայ գտնուեցան տնտեսական մարմիններու ներկայացուցիչները, յայտարարելու համար այդ մարմիններուն պատրաստած տնտեսական վիճակի բարելաման առաջարկները, զորս ներկայացուցած էր նախագահ Վոր. Էմիլ Լահուտի, խորհրդարանի նախագահ Նեպիհ Պրրիի եւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի:

Քասար յայտարարեց, որ տնտեսական մարմիններուն համար յստակ է, որ իբրանուեան տնտեսութիւնը շատ վաղա՛յն վիճակի հասած է եւ պետութեան հաստատութիւնն ալ քննութեան առարկայ դարձած է, «բայց կացութիւնը դարձանելու եւ նոր թափով սկսելու առիթը կայ, պայմանաւ որ ճիգերը մէկտեղենք եւ քաղաքական համախոհութեան վրայ հիմնուած յստակ տնտեսական քաղաքականութիւն որդեգրենք»:

Այնուհետեւ գրասենեակներու համախմբումի փոխ նախագահ Մոհամետ Լամա կարգաց մարմիններու «աշխատանքի թուղթը», ուր անոնք կոչ կ'ուղղեն՝ տնտեսութիւնը դուրս պահելու քաղաքական քաջքրուկներու շրջագիծէն եւ հեռու՝ Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացին դիմագրաւած դժուարութիւններուն ծխական անդրադարձներէն:

«Թուղթը» հաւաստեց, որ հակառակ տնտեսական դժուարութիւններուն, կացութիւնը դարձանելի է, պայմանաւ որ վճռական որոշում տրուի ստեղծուելու այս ճիգերուն նպաստաւոր մթնոլորտ մը, որուն գլխաւոր յատկանիշներն են քաղաքական եւ ապահովական կայունութիւնը: Պետութեան էլեւըտակական վիճակի բարեկարգումին հիմն է պետական վարչամեքենայի բարեկարգումները, որոնց ծիրէն ներս անհրաժեշտ է կրճատել պետական պաշտօնեաները:

րոն թիւը, աւելցնել անոնց աշխատանքի ժամերն ու արտադրողականութիւնը, բարելաւել անոնց վերահսկող մարմիններու աշխատանքը եւ վերջ դնել քաղաքական միջամտութիւններուն, ըսաւ թուղթը, վերահաստատելով սպասելուականացումի կարեւորութիւնը:

● «ԿԱՊՊՅՏ ԳԻԾ»ԻՆ վրայ Ֆիլիպի շրջուն ջոկատներու թիւի յաւելումէն ետք, հարաւային Լիբանանի մէջ գործող ՄԱԿի խաղաղարար ուժերու ընդհանուր հրամանատար Վոր. Լալիթ Թիուարի երէկ բարձրաստիճան սպաներու հետ այցելեց սահմանին մօտ գտնուող Ֆիլիպիի հնդկական ջոկատի դիրքերը:

Իսրայէլեան հսկողութեան օդանաւ մը թռիչք կատարեց Ղաժար, Մթըլլէ եւ Մապաթէի Շրպայա շրջաններուն վերէ: Իսրայէլեան «պոլիտոպըր» մը երէկ գործի լծուեցաւ բարձրացնելու իսրայէլեան բանակի Ռուայսաթ Ալամի դիրքին շուրջ աւազանները, իսկ բանակը հսկողութեան աշտարակ մը կառուցեց Սատունէ լեռան մօտ եւ պայն օժտեց հսկողութեան սարքերով:

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Լիբանանի Հայոց Ազգային առաջնորդարար այսու կը յայտարարէ, թէ Պուրճ Հանուտի Ազգային գերեզմանատան մէջ ձեռնարկուած արդիական ռճով դարակ-դամբարաններու շինարարական աշխատանքը արդէն իսկ իր լրումին հասած է:

Հետեւաբար, կոչ կ'ուղղենք բոլոր այն ազգայիններուն, որոնք.–

- 1.– Նախօրօք սեփական դարակ-դամբարան ունենալու իրենց նիւթական պարտաւորութիւնները կատարած են, պարտին հանդիպիլ Ազգային առաջնորդարան, ամէն օր կէսօրէ առաջ ժամը 9:00էն 1:00, դարակ-դամբարանի «գործածութեան իրաւունքի հաստատագիր» ձեռք ձգելու համար:
- 2.– Դարակ-դամբարանի «գործածութեան իրաւունքի հաստատագիր» ձեռք բերումէն ետք միայն, Ազգայինները ի վիճակի պիտի ըլլան իրենց հարապատներուն աճիւններու փոխադրութեան հարցով վարչիլ, ինչպէս նաեւ իրենց նոր հանգուցեալ պարագաները թաղել:
- 3.– Սահմանափակ թիւով դարակ-դամբարաններ կը մնան, որոնց իւրաքանչիւրին սակը 1500 տոլար է:
- 4.– Կան նաեւ դամբարաններ երրորդ յարկի վրայ, իւրաքանչիւրին սակը՝ 3000 տոլար:
- 5.– Կ'ուզենք մեր ազգայիններուն ուշադրութեան յանձնել, որ Ֆրըն Շրպպէի Ազգային գերեզմանատան մէջ նաեւ դարակ-դամբարաններ կան, տրամադրելի մեր ազգի պատկաններուն, իւրաքանչիւրին սակը՝ 1500 տոլար:

ԳԻԻՍՆ ԱՉԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

**Vivactice**

**ՄԱՐԶՈՒՄԻ ԵՒ ԳԵՂԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԿԵՂՐՈՆ**

Օրոնյտի Զողաքապետարանին մօտ, Սաքոնայտի դիմաց, Սեմբըր «Շարա», Բ. յարկ: Ըեռ. 587077:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿԹՈՎԱԿ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ՀԻՄՆԱՐԿ (Գործակցութեամբ եւ հովանաւորութեամբ Երեւանի Պետական Համալսարանի)

**2002-2003 ՏԱՐԵՇՐԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

Ընթացիկ 2002-2003 տարեշրջանի հինք թէ նոր ուսանողներու արձանագրութիւնները կը կատարուին 17էն 28 Յունիս 2002, ժամը 9:00էն 14:00, Համազգայինի Լշան Փալանճեան ճեմարանի գրասենեակներէն ներս:

Ըեռաձայն՝ 01-375410  
03-429685  
FAX 01-372446  
E-MAIL Hamazcen@Cyberia.net.lb

● Սուտքի ընդունելիւնները պիտի կայանան 1-3 Ըոկտեմբեր 2002ին:

● Գիշերօթիկնոց ընդունելու համար թեկնածուները պարտին իրենց դիմումագիրները ներկայացնել մինչեւ 15 Օգոստոս 2002:

Ամրան եղանակին գրասենեակները բաց պիտի ըլլան Երեշաքթի օրերը, առաւօտեան ժամը 10:00էն 1:00:

ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

# ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Տեղական մամուլը իր 21 Յունիսի թիւով գլխաւորաբար անդրադարձած է իսրայէլի կողմէ Լիբանանի, Սուրիոյ եւ Իրանի դէմ ուղղուած սպանալիքներուն եւ անոնց արձագանգներուն ու հակապաղեստիններուն: Թերթերը գրած են, թէ Դամասկոսի եւ Պէյրութի միջեւ բարձրագոյն մակարդակի վրայ խորհրդակցութիւններ տեղի կ'ունենան՝ իսրայէլեան ծրագիրներուն առաջը առնելու համար: Միւս կողմէ, ակնարկելով նախագահ Լահուտի կեցուածքին, անոնք նշած են, թէ նախագահը յայտարարած է, թէ իսրայէլեան վերջին սպանալիքները կը նպատակադրեն խանգարել զբօսաշրջութեան եղանակը: Քոֆի Անան կը պոզուարեն, թէ «Կապոյտ Գիծ»ի երկու կողմերը որեւէ փոքր միջադէպով կրնան մեծ բռնկումի ենթարկուիլ, գրած են օրաթերթերը:

Թերթերը գրած են, թէ մինչ իբրանեան կողմը ներքին եւ միջազգային առումով աշխատանք կը տանի իսրայէլեան սպանալիքներուն դէմ դնելու համար, իսրայէլեան օդանաւեր թռիչք կը կատարեն Պէյրութի եւ Պէքրայի վերէ: հարաւային շրջաններու մէջ կատարուած ոտնձգութիւններուն կողքին:

Լիբանանեան ներքին քաղաքական կեանքին անդրադառնալով, թերթերը լուսարձակի տակ առած են բքիշայինի հարցը: Ըստ անոնց, բքիշայինի հարցը աղմկայի կերպով հրապարակ վերադարձաւ, նախարարութիւնը քննիչներ ուղարկեց երկու ընկերութիւններուն մօտ եւ դատական իշխանութիւնը գործի լծեց: Ըստ «Տիար»ի, բքիշայինի հարցով կրակը տակաւին միւլիներու տակ կը մնայ. նախարարաց խորհուրդը բուռն վէճերու բեմ դարձաւ այս հարցով. նախարար Քըրտահի «Լիպանալի» ընկերութիւնը ամբաստանեց ընկերութեան հաշիւները քննելու համար իր կողմէ դրկուած պատուիրակներուն արգելք հանդիսացած ըլլալու յանցանքով:

«Անուար»ի համաձայն՝ նախարար Քըրտահի դատական իշխանութիւններուն կոչ ուղղած է բքիշայինի երկու ընկերութիւններուն մօտ միջամտելու:

Թերթերը նաեւ գրած են, թէ նախագահ Լահուտ Լիբանանի ներկայ իրավիճակին ակնարկելով յայտարարած է, թէ տնտեսական կացութիւնը հետպիտեմ անտանելի կը դառնայ եւ անոր բարելաւումը պէտք է արագօրէն իրականանայ:

Միջազգային գետնի վրայ, Միացեալ Նահանգներ կը շարունակեն ապրիլ ապահովական յարուած մթնոլորտի մէջ, նշած են օրաթերթերը: Ըստ անոնց՝ ԷՖ. Պի. Այ. պոզուացուցած է

Շար.՝ էջ 10

**igloo** Ets. Avo Soulahian

Family 34,0L Combo

1 34,0L

2 3,8L

3 1,0L

Exclusive Agent Ets.Avo Soulahian Tel: 01 - 691526

**ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARD**

**ՏՆՏԵՄԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ**

**ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

ԲԱՆԱԶԵԻՐ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

ԱԶԳԱՅԻՆ ԿԻՐՈՒՄԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆ

Պիկոսուբեան յարաբերութիւնները քե՛ն ներազգային եւ քե՛ միջազգային բեմերու վրայ եղած են բեղուն, ներգործօն եւ ազդու:

Ս. Աթոռս, վեհափառ հայրապետի գլխաւորած պատուիրակութիւններով, մասնակցած է Հայաստան - Սփիւռք երկու խորհրդաժողովներուն եւ Հայաստան Համահայկական Հիմնադրամի աշխատանքներուն: Ձեռնարկած է Հայաստանի ու Արցախի մէջ մշակութային բնօրէն ծրագիրներու եւ իր բոլոր միջոցներով սատարած՝ Հայաստանի, Արցախի ու Սփիւռքի հայ ժողովուրդի իրաւունքներու նկատմամբ, միջազգային կազմակերպութիւններու մօտ Հայաստանի հեղինակութեան բարձրացման ու ազգային պահանջներու հետապնդման:

5.- Կաթողիկոսութեան մշակութային գործունէութիւնը ծաւալած է:

Մատենադարանը բարեկարգուած, թանգարանը բացուած եւ վերածուած՝ մշակութային կարեւոր ձեռնարկներու կեդրոնի: Հրատարակչական պատկառելի աշխատանք կատարուած է, որ մասամբ իրագործուած է Գալուստ Կիւլպեկեան հիմնարկութեան Հայկական բաժանմունքին հետ գործակցութեամբ:

Կրթական ծառայութեան մարզին մէջ, Ս. Աթոռս, դպրեվանքին եւ Խաչեր Գալուստեան մանկավարժական կազմաւորման կեդրոնին առընթեր, կազմակերպած է հայ մտաւորականութեան հետ հանդիպումներ, ուսուցչական համագումարներ, ու ձեռնարկած՝ կրօնի նոր դասագիրքերու պատրաստութեան:

Այսպէս, մշակութային - կրթական գործունէութիւնը դարձած է Ս. Աթոռի ծառայական առաքելութեան կենսական բաղկացուցիչներէն մէկը:

6.- Ծինարարական մարզին մէջ կատարուած են մեծ իրագործումներ: Վերանորոգուած են թանգարանն ու մատենադարանը, ամբողջացուած ու հիմնովին վերանորոգութեան ենթարկուած են եպիսկոպոսարանն ու միաբանական շէնքը: Վերանորոգուած են Մայր տաճարը, Նահատակաց մատուռը, վեհաբանը ու կաթողիկոսներու եւ միաւորակներու դամբարանը: Ծինարարական ու վերանորոգութեան աշխատանքներ կատարուած են նաեւ Պիքֆայայի մատարան, հովոցին եւ դպրեվանքին մէջ:

Նորաստեղծ կալուածոց տեսչութիւնը ցուցակագրած է կաթողիկոսարանի կալուածները, կատարած կալուածաբնութեան ստուգումը եւ հսկած՝ կալուածներու աւելի բարւոյք յանձնաձեւման:

Բարերարութիւններու թէ կաթողիկոսութեան տրամադրած նկութեան միջոցներու շնորհիւ կատարուած այս լայնածիր աշխատանքները կաթողիկոսարանին տուած են արտաքին վեհափառութեան եւ բարեկամութեան՝ աշխատանքի կարելիութիւնները:

7.- Կաթողիկոսարանի բաժանմունքները գործած են գովելի աշխուժութեամբ եւ կը ներկայանան իրագործումներու պատկառելի քանակով մը: Դպրեվանքի, տպարանի, գրատան, քրիստոնէական դաստիարակութեան բաժանմունքի, միջեկեղեցական յարաբերութիւններու բաժանմունքի, Հայաստանեայց եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողներու Միութեան (ՀԵՀՈՄ) եւ այլ վանական տեսչութեանց կողքին, վեհափառ հայրապետին անմիջական նախաձեռնութեամբ եւ հայրական ցուցմունքներով հաստատուած է տեղեկատուական բաժանմունքը:

8.- Կաթողիկոսութեան հոգեւոր առաքելութեան էութեան բխող ընկերային ծառայութեան մարզին տրուած է յատուկ մտում: Ազուցիւնի Հայ Ազգային Թուժարանը, Ազգային Մեթոդոլոգիայի Բնագիտական շարունակած են վայելել Ս. Աթոռի հոգածութիւնը եւ նոր իրագործումներով ծաւալել իրենց մարդկային-ընկերային առաքելութիւնը: (Շար. 2)

Շար.՝ էջ 8

ԱԶԳԱՅԻՆ ԱԲԳԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍ



Կիրակի, 16 Յունիսին, Ազգային Արգարեան վարժարանի Հանդիսարանին մէջ տեղի ունեցաւ մանկապարտէզի ամառային հանդէս:

Այս տարուան հանդէսը նուիրուած էր ծաղիկներուն, որոնք բնութեան բարիքներն են ու մարդոց կեանքը գեղեցկացնող ու գունաւորող տարրերը:

Մանկապարտէզի աշակերտները արտասանութեամբ, երգով, նուագով ու պարով ներկայացուցին զանազան ծաղիկներ եւ սրահին բեմը վերածեցին գեղեցիկ պարտէզի մը:

Իր արտասանած խօսքին մէջ վարժարանի տնօրէն Գեղարի Էթեմեզեան սիրով հրամայականը անհրաժեշտ գտաւ, բնութեան ծաղիկները՝ մանկապարտէզի աշակերտները պահպանելու համար:

Ան շնորհակալութիւն յայտնեց ծնողներուն, որոնք ընտրած են Հարազատ պարտէզ՝ ազգային վարժարանը, որ իրենց կ'երաշխաւորէ առողջ ու Հարազատ պտուղի արտադրութիւնը: Տնօրէնը շնորհակալութեան խօսք ուղղեց նաեւ վարժարանի յառաջդիմութեան սատարող մարմիններուն, բարեսիրական միութիւններուն եւ բարերարներուն, որոնք նեցուկով կարելի կ'ըլլայ յաղթահարել ծառայող դժուարութիւնները:

Հանդիսութեան աւարտին վկայական ստացան Պօղոս Գփտըրեան, Հրակ Տէտէեան, Փիլիք Պալանեան, Վրէժ Գրիգորեան, Սինթիա Սալէզ, Ճորճիտա Պշտիկեան, Բալիկ Տարազեան, Իլիթա Նալպանտեան, Սարին Սաչոյեան եւ Թամար Շէնէնգեան:

ՆԵՐԿԱՅ ՄԸ

ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՔՈԼԷՃԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԱՄԱՎԵՐՁԻ ՀԱՆԴԵՍԸ



Շարաթ, 15 Յունիսին, Հայ Աւետարանական Ա. Եկեղեցւոյ Հանդիսարանին մէջ տեղի ունեցաւ Հայ Աւետարանական քոլէճի ամառային հանդէսը:

Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներու յորդանակայ ունկնդրութեանն էտք հանդէսը սկսաւ Հայ Աւետարանական եկեղեցւոյ հովիւ վեր. Յովհաննէս Սվաճեանի աղօթքով, ապա ծաղիկ եւ կոկոն դասարանի աշակերտները ներկայացուցին «Քաջ Նազարը»: Զոյգ դասարաններու աշակերտները նաեւ արտասանեցին Հայերէն, արաբերէն, անգլերէն եւ ֆրանսերէն բանաստեղծութիւններ:

Ապա վարիչ - մանկապարտէզպանուհի Անի Եուրիսի հրաւէրով տնօրէն Զաւէն Մսերլեան յանձնեց մանկապարտէզի շրջանաւարտներուն վկայականները: Այս տարի Հայ Աւետարանական քոլէճի մանկապարտէզը աւարտեցին Պեճ Ծովհաննէսեան, Մեղրի Պաղտոյեան, Նազանի Սվաճեան, Արագ Տեմիրճեան: Վկայականներու յանձնման արարողութեանն էտք տնօրէն կարգաց փակման խօսքը:

Հանդէսը փակուեցաւ վեր. Յովհաննէս Սվաճեանի օրհնութեան աղօթքով:

www.homenetmentcentral.com

«ԱԶԱՏԱՄԱՐՏ» ԱԿՈՒՄԲ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒ ԵՐԵԿՈՅ (ՄԷՋԼԻՍ)

Ճոխ յայտագիր եւ համադր՝ Ճաշ: Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 28 Յունիս 2002, երեկոյան ժամը 9:00-ն սկսեալ «Ազատամարտ» ակումբի «Չուլատարեան» սրահին մէջ:

ՍՍԿ՝ 10 ՏՈՒՐ

ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԵՓԱԿԻ ՏԱՂԱՊՆԵՐ ԱՀԱԶԱՆԳ Է ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅԵՐ ԱՐԹՆՅԷՔ...

2001 - 2002 կրթական տարին կը փակուի քանի մը օրէն:

Անցնող վերամուտին յոյսեր կապուեցան, թէ լուծուած մը կը գտնուի մեր վարժարաններու տնտեսական տագնապին, թէ մեր ուսուցիչները գոհ տրամադրութեամբ կ'երթան ամառնային արձակուրդի: Արձակուրդը ընդհանրապէս կազդուրիչ, վերանորոգիչ ուժ ունի: Իւրաքանչիւր անձ իր նախասիրութեան հետեւելով կը կազմակերպէ արձակուրդային յայտագիրը: Իսկ ուսուցիչներուն պարագային շատ կարեւոր է այս արձակուրդը, ոչ միայն ֆիզիքական հանգիստի, այլեւ մտային զարգացման, նորութիւններու հետեւելու եւ ինքզինք որակաւորելու: Այս ամէնը կ'ենթադրէ անշուշտ նիւթական կարելիութիւն: Հոս է արդէն բուն ցաւը: Մեր ուսուցիչները գուրկ են նիւթական կարելիութիւններէ, մանաւանդ՝ վերջին երեք - չորս տարիներուն ընթացքին:

Այս հարցը լուծելու համար քայլեր առնուեցան անցնող կրթական տարեշրջանին: Հայ ազգային, լիբանանահայ կեանքին հետեւող ուսուցիչ Հայ մօտէն թէ հետեւին տեղեակ է մեր վարժարաններու տագնապին, որովհետեւ Լիբանանի մէջ ամէն տարի քիչ մը աւելի տնտեսական տագնապի մագլցում արձանագրուեցաւ: Անգործութիւնն էլ անոր հետեւանքները ու՛րջ բան պիտի չըլլայ: Առաջին տուժողները եղան մեր վարժարանները, այսինքն՝ մեր ուսուցիչները: Ու առաջը առնելու համար այս ահաւոր ԲԱՅԻՆ, գուժարուեցան ժողովներ, համազուտարներ, ուղղակի կամ անուղղակի զրոյցներ: Հարցը քննարկուեցաւ ամէն կողմէ, բայց կը տեսնենք, որ արդիւնքի մը չենք յանգած: Մինչեւ իսկ վարժարաններ փակեցինք, խտացուցինք ուսուցիչներու շարքերը՝ խնայողութիւն կատարելու համար, բայց ԲԱՅԻՆ մնաց ու առաւել խորացաւ:

Ճիգեր եղան Ուսումնական Խորհուրդի, խնամակալութիւններու եւ պատկան մարմիններու կողմէ, բայց իրականութիւնը այն է, որ բաւարար չեղան կատարուած օժանդակութիւնները: Միւրեք չկրցանք պահանջուած օժանդակութիւնը հայթայթել: Անոնց մէջ կար դասակարգ մը, որ միշտ անտարբեր մնացած է անցեալին, ու այսօր՝ աւելի: Սրտցաւ եւ տիպար ծնողներ ունինք, որոնք կը տագնապին իրաւամբ բոլորիս հետ, բայց անկարելիին առկալութիւնը ճնշիչ կը մնայ անոնց ուսերուն: Արդար ըլլալու համար ըսենք, որ քիչը յիշեցին «Կամենալը կարենալ է» իմաստութիւնը: Ասիկա ուրիշին համար է, ոչ՝ մեզի, կը մտածէին այդպիսիք ու մեղանչեցին: Դպրոցի հանդէպ պարտաւորութիւնները միշտ վերջին հօգը նկատուած է մեր ծնողներէն շատերուն կողմէ: Ու այս դասին մէջ տեսանք իրենց զաւակներուն հանդէպ անբարեխիղճ ծնողներ, որոնք համարձակեցան շարիք բերել մեր ազգային կեանքին՝ գանոնք յանձնելով խորթ շրջանակներու: Աւելի չխօսինք այս մասին: Իրեւ թէ ճիշտ կամ ոչինչ սակով վարժարաններու յանձնեցին մեր ազգին ապագան կերտելու կոչուած մանուկները, պատանիները ու ասիկա՝ առանց խղճահարութեան:

Այո՛, ծնողներէն շատեր (բացառութիւնները յարգելի են միշտ), այո՛, շատեր կրնային նեցուկ կանգնիլ մեր վարժարաններուն, բայց չըրին: Մեղքը իրենց վրայն է:

Ու ապա դառնանք մեր ժողովներուն, «Լիբանանահայ կրթական կեանքը» իբրեւ օրակարգ արծարծած ժողովներուն: Շատ խօսեցանք, ցաւերը մատնանչեցինք, բայց մատի վրայ գտնուեցան «մատ շարժողները», ինչ որ անբաւարար եղաւ:

Ժողովուրդը Լիբանանի հայոց, գիտէք թէ ուսուցիչներ ունինք, որոնք գանձած են միայն երեք ամսուան թոշակ: Սա կը նշանակէ, թէ վեց ամիս չեն գանձած, ո՛ր մնացին ամառնային թոշակները:

Ի պատիւ մեր ուսուցիչներուն՝ հարկ է հաստատել, թէ անոնք հրապարակաւ ոչ մէկ բողոք ներկայացուցին: Գանադանք եղան ներքին, իրարմ միջեւ եւ չուզեցին փողոց իջնել: Իսկ մեր ժողովուրդը հաւանաբար կարծեց, թէ քանի որ ուսուցիչները Լուռ են, ուրեմն ամէն ինչ կարգադրուած է:

Եթէ ունինք մատի վրայ համրուող հագիւ ինքնաբաւ, ծայրը ծայրին բերող վարժարաններ, Պաուս... Հաւանաբար գտնուին կարգ մը առանձնաշնորհալ ուսուցիչներ, առաւելաբար նորադիրներ, որոնց գոհունակութիւն տրուեցաւ իբրեւ նորեկներ: Իսկ միւս կողմէ վաստակաւորները առաւել տուժեցին, որովհետեւ անոնք չկրցան «չարժիլ», կար հատուցումի հաշիւ:

Ո՛ր պիտի հասնինք այս քայլերով, կարկամ, դանդաղ ու երբեք:

Ժողովուրդային մտածողութիւնն ալ ունի իր ուրոյն վարկածը: «Ազգին մեծերը թող մտածեն, անոնք թող օգնեն մեզի»: Այս կեցուածքը կարելի է վերլուծել ճիշդ կամ սխալ գնահատանքով: Բայց փիլիսոփայութեամբ մտածանալը չէ, օղակը սեղմած է մեր վիզը, ու փրկութիւնը կ'ակնկալուի հրաշքէն: Այսպիսով Լիբանանի մէջ հայկական ուսումնառութիւն, հայեցի կրթութիւն կամ դաստիարակութիւն չ'ըլլար: Չիր դարուն հայ ուսուցիչը չի կրնար ասկէ աւելի գլուխ ծռել: Յետո՛յ... Այս «յետոյ»ին պատասխանը կը սպասուի:

Լիբանանահայ ուսումնական-կրթական համակարգը հիւանդ է հայկական բոլոր վարժարաններու պարագային, առանց համայնքային խորութեան:

Ահազանգը հնչած է. ով որ քնացած է, անպայման պէտք է արթնանայ փրկուելու համար...



# ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՆԵՍՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉ


ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ



## ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՅՔԵՐ

### ՕՐԻՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ ՄԱՍԻՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՑԱՆՑՈՎ



«Հայ Ազգային բազմադարեան արժեքներով եւ ժառանգութեամբ՝ դէպի արդի իրաւական մշակոյթ»: Ահա այս խօսքերով կը բացուի հայրենի նորաստեղծ [www.legalaid.am](http://www.legalaid.am) կայքը, հիմնուած՝ ճիւղային իրաւաբանական ծառայութիւններ մատուցող կազմակերպութիւններու համագործակցութեան կողմէ, որուն անդամ են 15 կազմակերպութիւններ: Կայքին նպատակն է լուսարանել անդամ կազմակերպութիւններուն աշխատանքները, ինչպէս նաեւ՝ հանրութեան ներկայացնել իրաւաբանական ճիշտ տեղեկատուութիւն: Կայքը ունի «Մեր մասին», «Աշխատակարար», «Անդամներ», «Ծրագիրներ», «Գործընկերներ», «Խորհրդատու», «Նորութիւններ» եւ «Կապ» բաժինները:

Կայքը իր նիւթերը կը ներկայացնէ հայերէն եւ անգլերէն լեզուներով:


## ՀԱՄԱՑԱՆՑԻ «ՕՍԲԱՐ»ՆԵՐ

### «ՈՒԷՊԻ ԸՈՒՈՐՏԶ» Կ'ԸՆՏՐԷ ՏԱՐՈՒԱՆ ԼԱԻԱԳՈՅՆ ԿԱՅՔԵՐԸ

18 Յունիս 2002ին Սան Ֆրանսիսքոյի մէջ տեղի ունեցաւ համացանցի տարուան լաւագոյն կայքերու ընտրութեան մրցանքը՝ «Ուէպի Ընտրող»:

Յաջողաբար վեցերորդ տարին ըլլալով՝ «Ուէպի Ընտրող» պարգեւատրեց զանազան բնագաւառներու լաւագոյն կայքերը:

Այս տարի 30 բնագաւառներու մէջ մրցեցան շուրջ 150 կայքեր: Ստորեւ կը ներկայացնենք հետաքրքրական կարգ մը բնագաւառներու կարգ մը թեկնածուները եւ մրցանակակիրները:



- Հատանքին արժանացած)
  - [www.zoozoom.com](http://www.zoozoom.com) («Ուէպի Ընտրող»ի արժանարած)
- ՀԱՐԺԱՊԱՏԿԵՐ
  - [www.metacritic.com](http://www.metacritic.com)
  - [www.walkinglifemovie.com](http://www.walkinglifemovie.com)
  - [www.withoutabox.com](http://www.withoutabox.com)
  - [www.ifilm.com](http://www.ifilm.com) (ժողովուրդի գնահատանքին արժանացած)
  - [www.donniedarco.com](http://www.donniedarco.com) («Ուէպի Ընտրող»ի արժանացած)

#### ԼԱԻԱԳՈՅՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

- [www.amazon.com](http://www.amazon.com)
- [www.nationalgeographic.com](http://www.nationalgeographic.com)
- [www.peacecorps.gov](http://www.peacecorps.gov)
- [www.goarmy.com/basic](http://www.goarmy.com/basic)
- [www.google.com](http://www.google.com) (ժողովուրդի գնահատանքին եւ «Ուէպի Ընտրող»ի արժանացած)

#### ԽԱՂԵՐ

- [www.banja.com](http://www.banja.com)
- [www.ea.com](http://www.ea.com)
- [www.popcap.com](http://www.popcap.com)
- [www.games.swirve.com](http://www.games.swirve.com) (ժողովուրդի գնահատանքին արժանացած)
- [www.netbabyworld.com](http://www.netbabyworld.com) («Ուէպի Ընտրող»ի արժանացած)

#### ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿԱԿԱՆ

- [www.jasonproject.org](http://www.jasonproject.org)
- <http://marcopolo.worldcom.com>
- [www.nomoretets.com](http://www.nomoretets.com)
- [www.enature.com](http://www.enature.com) (ժողովուրդի գնահատանքին արժանացած)
- [www.exploratorium.edu](http://www.exploratorium.edu) («Ուէպի Ընտրող»ի արժանացած)

#### ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ

- [www.pineholespy.com](http://www.pineholespy.com)
- [www.sfskids.com](http://www.sfskids.com)
- [www.teenwire.com](http://www.teenwire.com)
- [www.channelone.com](http://www.channelone.com) (ժողովուրդի գնահատանքին արժանացած)
- [www.ology.amnh.org](http://www.ology.amnh.org) («Ուէպի Ընտրող»ի արժանացած)

#### ՆՈՐԱՉԵՒՈՒԹԻՒՆ

- [www.hintmag.com](http://www.hintmag.com)
- [www.lumiere.com](http://www.lumiere.com)
- [www.sowear.com](http://www.sowear.com)
- [www.style.com](http://www.style.com) (ժողովուրդի գնահատանքին արժանացած)

## ԱՐՇԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ


### ԲՉԻՉԱՅԻՆ ՀԵՌԱՉԱՅՆԸ ԳՐՊԱՆԻ ՀԱՄԱԿԱՐԳԻՉ



1996ին «Նոթիա» հրապարակ իջեցուց «9000 քոմիւնիքէյթը»-ը, որ հանդիսացաւ առաջին սարքը, որ կը համարկէր ընթացիկ հեռաձայնի եւ գրայնի համակարգիչի մը կարելիութիւնները: Այսօր այս սարքին նորագոյն տարբերակը յատուկ տեղ կը գրաւէ հաղորդակցութեան աշխարհի արհեստագիտական նորութիւններուն մէջ:

Մարքը սօտուած է գունաւոր «էլ. Սի. Տի.» պատուով, ստեղծաշարով («քիպորտ»), 32 պիթ «Սի. Փի. Եռու»ով, եւ շարք մը ծրագրերով, ինչպէս՝ «Ուրտ փրոսեսըր», «Փատուր փոյնթ վիւրը», «Սփրէտիթ» եւ այլն: Մարքը նաեւ սօտուած է համացանցի կայքեր այցելելու կարելիութիւն ընծայող «պրաուզըր»ով մը, որ «Կը կարդայ» «ճաւա»ով եւ «Ֆլէշ»ով պատաստուած կայքեր: Մարքը նաեւ առիթը կ'ընձեռէ ե-նամակներ, ֆաքսեր եւ ֆայլեր ուղարկելու՝ շուրջ 43,2 kbps արագութեամբ:

### ՀԱԿԱԱՄԵՐԻԿԱ ԵՒ ՀԱԿԱՍՐԱՅԷԼ «ՀԷՔԸՐ»ՆԵՐ ԿԸ ՄԻԱՆԱՆ



Մասնագէտներու համաձայն, հակամերիկեան, եւ հակաիսրայէլեան տրամադրութիւններ ունեցող «Էքսթրեմիզմ»ներ այս օրերուն լաւապէս կը գործակցին իրարու հետ՝ համակարգչային ահաբեկչութիւն կատարելու համար:

Ըստ երկկողմանի անվտանգութեան «Էմ. Այ. 2 ձի.» ընկերութեան, «Հէքըր»ներու խմբաւորումներ հետզհետէ աւելի լայն գործունէութիւն կը վարեն եւ իրենց «ահաբեկչական» արարքներուն ընթացքին աւելի յաճախ կը գործակցին: Մասնագէտի մը համաձայն համացանցի վրայ «Էքսթրեմիզմ» գործողութիւններու արձանագրած աճին գլխաւոր պատճառը կարելի է նկատել իսրայէլի եւ Պաղեստինի, Հնդկաստանի եւ Փաքիստանի, ինչպէս նաեւ՝ Չինաստանի եւ Թայւանի միջեւ գոյութիւն ունեցող լարուածութիւնները:

Այսպէս, օրինակ, Սեպտեմբեր 2000ին պաղեստինեան «Ինքիֆատա»-ի սկիզբով շատ աւելի յաճախակի դարձան իսրայէլեան կայքերու վրայ «Հէքիցկ»ները: «Եռնիքս Սիբերիթի կարող» անունով հակա-իսրայէլեան միացեալ կազմակերպութիւն մը Մայիս 2002էն ի վեր 87 կայքերու վրայ յարձակութիւններ կատարած է: Փաքիստանեան խմբաւորում մը, «Ուրտը ֆանթաստիկալ Տիֆէյլըրը» անունով, որուն մաս կը կազմեն «Էքսթրեմիզմ»ներու 12 խմբակներ, Նոյեմբեր 2002էն ի վեր 445 յարձակութիւններ կատարած է «Էքսթրեմիզմ»ներու հանունով խմբաւորում մը, հիմնուած՝ 2001ի Յունիսին, իր կարգին ցարդ 422 կայքերու վրայ յարձակութիւններ կատարած է: Սակայն նմանօրինակ գործողութիւններ նորութիւն մը չեն հանդիսանար: 1999ին, երբ ՕՍԱՆ եւ Միացեալ Նահանգներ Սեպտեմբեր վրայ յարձակութիւններ կը կատարէին, սերպերու համակարգ «Էքսթրեմիզմ»ներ լուրջ վնասներ հասցուցին Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարարութեան ցանցերուն:

Պատրաստեց՝ Խ. ՍՈՒՐԱՏԵԱՆ

**ՀԱՄԻԿ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՅՆԵՆ**

HAMPIG SASSOUNIAN  
CSP - L.A.C. B - 5 - 131 44750  
60-TH ST. WEST LANCASTER,  
CA, 93536 — USA

## «ԱՉԴԱԿ»Ի ՄԷՉ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փափաքին «Ազգային»-ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատնուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցնեն հրատարակման թուականէ առնուազն օր մը առաջ, Մինչեւ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԱՐ 5:00: ՄԱՀԱՉԴԱԿԵՐԸ բացատրութիւն եւ: Մաքազ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

## «ՈՒԷՊԻ ԸՈՒՈՐՏԶ»Ի ՎԵՅԱՄԵԱՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

«Ուէպի Ընտրող»-ի առաջին մրցանակաբաշխութիւնը տեղի կ'ունենայ 17 Մարտ 1997ին: «Տը Ուէպ» թերթին խմբագրակազմը կամը կը կատարէ 15 մրցանակակիրներուն ընտրութիւնը: Օրէնք կը նշուի, որ իւրաքանչիւր մրցանակակիրի արտասանած խօսքը պէտք է ըլլայ աւելի քան... հինգ բառ: Երկրորդ «Ուէպի Ընտրող»ը տեղի կ'ունենայ 6 Մարտ

1998ին, եւ մամուլը լայնօրէն կ'անդրադառնայ մրցանակաբաշխութեան: 1998ի Յունիսին կը հիմնուի «Թուագրային արուեստից եւ գիտութեան» միջազգային ակադեմիան, որուն հիմնադիր անդամներուն կարգին կ'ըլլան միջազգային աստղեր Տէյլիտ Պոյի եւ Ֆրանսիս Ֆորտ Քոֆոլա: Ակադեմիան կը ստանձնէ մրցանակակիրներու ընտրութեան աշխատանքը: 18 Մարտ 1999ին տեղի

կ'ունենայ երրորդ մրցանակաբաշխութիւնը: 22 բնագաւառներու մէջ կայքեր կը ստանան «Ուէպի Ընտրող» «Ուէպի Ընտրող»ը տեղի կ'ունենայ Մայիս 11 2000ին: Յաջորդ ամիս հազարաւոր յօդուածներ լոյս կը տեսնեն ձեռնարկից մասին: Հիմնադրող «Ուէպի Ընտրող»ը տեղի կ'ունենայ 18 Յունիս 2001ին:

## ԱՐԳԻԱԿԱՆ «ԻՆԹԸՐՆԵԹ ՔԱՖԷ» ՄԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՉ

14 Յունիսին Երեւանի մէջ բացուեցաւ «Մէքս-փաուր» անունով «Ինթըրնէթ քաֆէ» մը, որ կը պատկանի «Սիլիսիում» ընկերութեան: Համակարգիչներու եւ համացանցի հաստատութիւն ապահովող այս կեդրոնը համացանցի կայք կ'ապահովէ ար-

բանակային «Լորը Սիսթըմ» ղրութեան: Այսօր կ'ընթացի 19 արբանակներով օժտուած ծանօթ ընկերութիւն մըն է, որ կը գործէ Ամերիկայի, Եւրոպայի եւ Աֆրիկայի մէջ: «Քաֆէ»ն օժտուած է 16 համակարգիչներով: Ան կ'ընդգրկէ նաեւ յա-

տուկ «Կէյմ գոն» մը՝ երկտրոնային խաղերու սիրահարներուն համար:

**ԾԱԽՈՒ ԸՈՂԱՇԵՐՏ**

• Այնճարի մէջ, 4000 քառ. մետր տարածութեամբ, ցրտորով եւ ելեկտրակա- նուրէպմբ: Դիմել՝ հեռ. 03-207772:

# Մանկապատանեկան

## ԶԳՈՒՇԱՆԱՆՔ ԱՐԵՒԷՆ

Վերջապես ամառ է: Դպրոցը վերջացավ: Մենք ազատորեն կրճատեցինք ուղղուիլ ծովափ... Սակայն ուշադրություն արեալն պաշտպանուիլ:

ԱՐԵՒԷ ՕԳՏԱԿԱՐ Է

Անշո՛ղջտ: Առանց անոր կենսի գոյութիւն չի կրնար ունենալ: Արեւուն ճառագայթները անհրաժեշտ են բոյսերուն աճումին եւ, հետեւաբար, անոնցմով սնանող բուսակեր էակներուն: Իսկ այս վերջինները իրեն ճաշ կը ծառայեն մսակերներուն, որոնց կենսաբանական դակիորէն կախալ է բոյսերէն: Արեւը անհրաժեշտ է նաեւ մեր առողջութեան համար: Օրինակի համար, ան մեր մորթին կարեւորութիւնը կու տայ շինելու ՏՏ- կենսանիւթը, որ մեր աճումին համար կենսական է: Ան լաւ է նաեւ տրամադրութեան համար: Ընկճըւածութեանն տառապող անձեր երբեմն կը վերագտնեն ուրախ վիճակ մը, երբ զօրաւոր լոյսի ներկայութեան կը գտնուին:



դուն արեւուն տակ կը մնաս, բնականէն աւելի շատ մեկանից կ'արտադրես: Այս պատճառով մորթիդ գոյնը թուի կը դառնայ: Այս թուի գոյնը կը գտնուի լոյսը: Ան քեզ մասամբ կը պաշտպանէ արեւուն կարգ մը ճառագայթներէն: Ըստ երեւոյթի, ան արգելք կրնայ հանդիսանալ կարգ մը մարմնի ներսուժումին:

ՊԷՏՏԷ Է ԶԳՈՒՇԱՆԱՆ ԱՐԵՒԷՆ ԸԱՌԱՎՈՅԹՆԵՐԷՆ

Այո՛, որովհետեւ այդ ճառագայթներուն մէջ կան ենթակարմիր ճառագայթներ (որոնք անտեսանելի են եւ տաքութեան տպաւորութիւնը կու տան), ինչպէս նաեւ՝ անբերելի եւ վտանգաւոր անողմանիքային (UV) ճառագայթները: Ասոնք են, որ մեզ արեւահար կ'ընեն: Արեւու այս արուածքները նոյնքան վտանգաւոր են, որքան՝ մորթիդ վրայ թափուած ջրը:

### ԻՆՉՈՒՄ ՄՈՐԹԸ ԿԸ ՍԵՒՆԱՅ

Մորթիդ կարգ մը բնական վնասումները արուածքներն են: Ընթացքին կը պատրաստեն մեկանից կոշտած նիւթ մը: Մուկ գոյնով այս պատիկ հատիկները կը հաւաքուին մորթիդ վերի խաւերուն մէջ եւ անոր գոյն կու տան: Երբ

## ԱՅԼԱԶԱՆ



### ՀՍԿԱՅԱԿԱՆ ԸՆԳՂԱՅ ՄԸ

Խաղաղական ովկիանոսի կղզիներէն մէկուն մօտերը գտնուած է աւելի քան չորս միլիոն երկայնքով ընգղայ մը: Զինորսներ զայն գտած են իրենց ցանցերուն մէջ: Անոնք կենդանին ցոյց տուած են գիտնականներու, որոնք հաստատած են, որ ան ցարդ մարդկութեան ծանօթ ամէնէն մեծ ընգղայն է:

### ԳԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԻՆՔՆԱՇԱՐԺՆԵՐ...

Թայուանի մէջ աղբահաւաք ինքնաշարժները մօտ օրէն իրենց շրջագայութեան ժամանակ պիտի ձայնասփռեն անգլիերէն լեզուի դասեր՝ շնորհիւ իրենց վրայ հաստատուած բարձրախօսներու: Այս դրութիւնը հաստատուած է, որպէսզի ամէն մարդ առնչուան քանի մը բառ անգլիերէն գիտնայ:

\*\*\*  
«ՀՆԱՐԱՍԻՏ» ՀԵՌԱՉԱՅՆ ՄԸ  
Ճափոնական ընկերութիւն մը կ'աշխատի

## ԱՆԱՍՈՒՆՆԵՐՆ ԱԼ ԼԱԻ ՀԱՅՐԵՐ ԵՆ

ԻՏԵԱԼ ՀԱՅՐ ՄԸ

... Կռուող ձուկն է: Ան կը շինէ բոյնը, իր ապագայ ձագերը կը պաշտպանէ վտանգներէն: Երբ ձագերը կը ծնին, ան իր հսկողութիւնը կը շարունակէ, միշտ պատրաստ, իր բերանով բռնելով այն ձկնիկը, որ պիտի ուզէ բոյնէն փախչիլ:



ԳՈՒՐԳՈՒՐԱՅՈՂ ՀԱՅՐ ՄԸ

Գիշերները հայր ջայլամն է, որ թուխսի կը նստի հակիթներուն վրայ՝ միշտ պատրաստ իր «պգտիկներ»ը պաշտպանելու գիշատիչներէն: Օրուան ընթացքին մայրն է, որ դարձաւ իր տեղը կ'առնէ, սակայն յաճախ ան հակիթները աւագի բարակ խաւով մը կը ծածկէ եւ կ'երթայ տափաստանին մէջ ուտելիք որոնելու: Երբ ձագերը կը ծնին, մայր ջայլամը այլեւս անոնցմով չի զբաղիր: Միայն հայրն է, որ կը հոգայ իր պգտիկները եւ կը զբաղի անոնց «դաստիարակութեամբ»:

«ՄԱՄԱ» ՀԱՅՐ ՄԸ

Կարծէք աշխարհը ծուռ դարձած է: Մովածիբուն պարագային, մամա ծովածին հակիթները կը դնէ



հայր ծովածին փորին վրայ գրպանին մէջ, եւ հայրը զանոնք հոն կը պահէ մինչեւ անոնց ծնունդը: Մէկ ամիս ետք պգտիկ ծովածիբը դուրս կ'ելլեն իրենց հօր «փորիկէն» եւ անմիջապէս լողալու կը սկսին:


ՎԵՐԱՐԿՈՒ ՀԱՅՐԸ

Հայր թեւատը (փենկուէնը) հակիթին վրայ թուխսի կը նստի երկու ամիս, առանց ուտելու եւ գրեթէ առանց շարժելու, զայն պահելով իր փորին տակը գետնից մարմինին ծալքերուն մէջ: Երբ թեւիկը կը ծնի, թեւատը կ'աթ կու տայ անոր: Իսկական մամա մը...



## ԻՆՉՈՒՄ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ ԶԵՆ ԽՕՍԻՐ


Եթէ անասունները խօսիլ կարենային, շատ օգտակար կրնային ըլլալ մեզի... Դիփինը կրնար մեզի պատմել ծովերուն խորքը ընկղմած նաւերու գանձերուն մասին...




Ենիկը կրնար հրէջներուն ըսել, թէ հրգեհը քովի թաղին մէջն էր... Իսկ մեր կատուն ալ աղուոր պատմութիւններ կրնար պատմել մեզ զբաղեցնելու համար... Մակայն անասունները չեն խօսիր: Անոնց բերանին ձեւը կարեւորութիւնը չի տար բառեր արտասանելու: Առաւել, անոնք չունին այնպիսի ուղեղ մը, որ կարենայ բազմաթիւ բառեր եւ քերականական օրէնքներ միտքը պահել: Միայն մարդ արարածը ունի նման ուղեղ մը:

\*\*\*  
Մակայն անասունները իրարու հետ կը հաղորդակցին: Անոնք ունին իրենց յատուկ «լեզու», որ կը տարբերի ըստ անասուններու տեսակներուն: Այս «լեզուն» կը բաղկանայ կանչերէ, ձեւերէ եւ նոյնիսկ՝ հոտերէ: Անոնք այս բոլոր միջոցները կ'օգտագործեն արտայայտելու իրենց համար կարեւոր բաներ: Անոնք կրնան իրարու լուր տալ վտանգի մը պարագային, ուտելիք պահանջել, եւ այլն: Մակայն արիւնք արգելք չ'ըլլար, որ մարդիկ եւ անասուններ իրարու հետ լաւ ժամանակներ չանցընեն:


## Ժ Ա Մ Ա Ն Յ




Կրնա՞ս գտնել այն մարդը, որ տարբեր է միւսներէն:



Կրնա՞ս գտնել պատկերին եւ աջ կողմի անոր ցոլացումին միջեւ գոյութիւն ունեցող 4 տարբերութիւնները:



Կրնա՞ս գտնել իրարու նմանող երկու պատկերները:



Թիւ 1 պատկերին նման քանի՞ պատկեր կարելի է կազմել գոյութիւն ունեցող կտորներով:

Պատրաստեց՝ ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

**ՄԵԼԲՈՆԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ**

**HALCO**

<b>ELECTRIC MOTORS</b>	<b>PNEUMATIC</b>
<b>REDUCTION GEAR MOTORS A. C. &amp; D. C.</b>	<b>DIRECTIONAL VALVES</b>
<b>REDUCTION GEARS</b>	<b>SOLENOID VALVES</b>
<b>VACUUM PUMPS</b>	
<b>WATER PUMPS</b>	<b>HYDRAULIC</b>
<b>POWER TOOLS</b>	<b>DIRECTIONAL VALVES</b>
<b>ELECTRIC WINCHES</b>	<b>SOLENOID VALVES</b>
<b>PNEUMATIC WINCHES</b>	<b>RELIEF VALVES</b>
<b>STAINLESS ELECTRODES</b>	<b>PUMPS &amp; PISTONS</b>

ԵՒ ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԻՏՐՈՒՔ, ՓՆԷՍՍԱԹԻՔ ՈՒ ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՄԱԹԵՕՐՆԵՐ, ՄԱՏՁԵԼԻ ԳԻՆԵՐՈՎ:

**Chromo St. Tel.: 01-254144, 01-254145, 01-254134, 03-666840, 03-666850.**

ՄԵԾԻ ՏԱՆԸ ԿԻԼԻԿԻՈՅ...

Շարունակում 4րդ էջին

9.- Վեհափառ հայրապետին առած նախա-
ձեռնութիւններով կարելի եղած է կաթողիկոս-
արանի ծաւալուն գործունէութեան համար
հրեթական միջոցներու ապահովումը:

Վեհափառ հայրապետն ու Քաղաքական ժո-
ղովը գովելի աշխատանք տարած են հսկելու
կաթողիկոսարանի ծախսերուն, վարելով
ունենական խոհեմ քաղաքականութիւն
իրենց տրամադրութեան տակ դրուած հիմնադր-
րամները գործածելով համաձայն անոնց սահ-
մանուած նպատակին եւ յաջողած են կաթողի-
կոսարանի ելեմուտքը հաւասարակշռել յաջոր-
դական հինգ տարիներու ընթացքին:

Ազգային Ընդհանուր Ժողովը իր բարձր
գնահատանքը կ'արձանագրէ Արամ Ա. կաթո-
ղիկոսի հովանաւորութեամբ եւ անմիջական
հսկողութեամբ Քաղաքական ժողովին կատա-
րած բոլոր աշխատանքներուն համար:

Ըստ էութեան քննարկումներու լոյսին
տակ, Ազգային Ընդհանուր Ժողովը յառաջի-
կայ Ազգային Կեդրոնական Վարչութեան կը
թելադրէ մասնաւոր ուշադրութիւն ընծայել
հետեւեալ մարզերուն.

1.- Վեհափառ հայրապետին Ազգային Ընդ-
հանուր Ժողովին ուղղած պատգամին ունկնե-
լիք՝ յատուկ կարեւորութեամբ ընդգծել ծա-
ռայութեան առանցքային տեղը Մեծի Տանն Կի-
լիկոյ կաթողիկոսութեան հաւատքի առաքե-
լութեան մէջ՝ ուժեղ եւ կազմակերպ բեմեր ու-
նենալու հրամայականէն թելադրուած:

2.- Գնահատելով հանդերձ թեմերու հետ
կապերը սերտացնելու ճիգը, կը թելադրէ գա-
նուք աւելի հետեւողական դարձնել: Այս գծով
բեմերու գործակցութիւնը կաթողիկոսարա-
նին հետ կը նկատէ խիստ հրամայական:

3.- Ազգային Ընդհանուր Ժողովը, նկատի
առնելով Լիբանանի քաղաքացիական պատե-
րազմին գործած աւերակները եւ շարունակուող
տնտեսական սուր տագնապը, միաժամանակ
հիմնուելով իբրանահայ գաղութի համայնե-
րային դրուածքին եւ անկէ բխող կարելիու-
թիւններուն վրայ, յատկապէս Սփիւռքի կա-
ռոյցներուն համար մարդուժ պատրաստելու
գծով, կը թելադրէ Ազգային Կեդրոնական
Վարչութեան յատուկ հոգածութեան առարկայ
դարձնել Լիբանանի թեմին դպրոցական ցանցը
եւ կաթողիկոսութեան թեմերուն հետ գործակ-
ցաբար միջոցներու ձեռնարկել գայն իր ներ-
կայ տագնապէն դուրս բերելու համար:

4.- Կաթողիկոսարանի աշխատանքներուն
առաւել արդիւնաւորման համար անհրաժեշտ
կը համարէ գայն հասուժաբեր կալուածներով
եւ հիմնադրամներով օժտելու նախաձեռնու-
թիւններ առնել:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Կաթողիկոսարանի բարերարներէն
ՃՈՆ ԵՒ ԶՈՒԱՐԹ ԿՈՒՐՃԻ հոգիներուն
համար հոգեհանգստեան յատուկ պաշ-
տօն պիտի կատարուի յառաջիկայ Կիրա-
կի, 23 Յունիս 2002ին, Անթիլիասի Ս. Գրի-
գոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յա-
ւարտ սուրբ պատարագի:

Կը հրահրուի Ճոն եւ Զուարթ Կուրճ
Համալսարանական Հիմնադրամէն կըր-
թաթղանկ ստացած եւ ստացող Գախկին
եւ այժմու ուսանողները, ներկայ գտնուե-
լու արարողութեան եւ իրենց արժանի յար-
գանքը ընծայելու ազնուահոգի եւ կրթանը-
ւէր բարերարներուն:

ԳԻՒՆԸ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

www.hamazkayin.com

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՄԱՆՈՒԿ ԱՆԹՈՍԵԱՆԻ մահ-
ւան քառասունքին առիթով, հոգե-
հանգստեան պաշտօն պիտի կա-
տարուի Կիրակի, 23 Յունիս 2002,
Նոր Մարաշի Սրբոց Քառասնից
Մանկաց եկեղեցւոյ մէջ, յա-
ւարտ Ս. պատարագի:

ԵՓՐԵՍ ԵԷՇԻՇԵԱՆԻ մահուան
Բ. տարեկիցին առիթով, հոգեհան-
գստեան պաշտօն պիտի կատար-
ուի Կիրակի, 23 Յունիս 2002, Անթի-
լիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս.
պատարագի:

ՆԻՐՎԱ ՈՍԿԵՐԻՉԵԱՆԻ մահ-
ւան քառասունքին առիթով, հոգե-
հանգստեան պաշտօն պիտի կա-
տարուի Կիրակի, 23 Յունիս 2002,
Նոր Սիսի Ս. Սարգիս եկեղեցւոյ
մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՀԵՐՄԻՆԷ ԿԵՕԶՃԵԱՆԻ մահ-
ւան քառասունքին առիթով, հոգե-
հանգստեան պաշտօն պիտի կա-
տարուի Կիրակի, 23 Յունիս 2002,
Ս. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ, յա-
ւարտ Ս. պատարագի:

ԾԱՆՈՒ
ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

• Ծա մըրրորութեան
պատճառով, 140 քառ.
մետր տարածութեամբ, գե-
ղատեսիլ դիրք, գրասե-
նակի կամ դարձանտան
յարձար, Պառլիքի, «Կա-
լերի Իթքիատ»ի մօտ,
հեռ. 03-226435:

Khabbaz-Orient Plus
Travel & Tourism
Varna
Starting from 350\$
Including R/T ticket, 8 days bungalow,
transfers, guides, Visa & taxes not included
Cyprus 3 days 185 \$
Boat trip to Cyprus & Greece 380 \$
01.900598, 901598 - 03.258336, 256254
www.orientplus.com

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՇԱԲԷ ՏԱՆՏԱԼԵԱՆԻ (ԾՆԵՎ՝
ՍԱՈՒԱՅԱ) մահուան քառասուն-
քին առիթով, հոգեհանգստեան
պաշտօն պիտի կատարուի Կիրա-
կի, 23 Յունիս 2002, Նոր Սիսի Ս.
Սարգիս եկեղեցւոյ մէջ, յաւարտ
Ս. պատարագի:

ՊԱՐԳԵՒ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ մահ-
ւան Ա. տարեկիցին առիթով, հոգե-
հանգստեան պաշտօն պիտի կա-
տարուի Կիրակի, 23 Յունիս 2002,
Նոր Մարաշի Սրբոց Քառասնից
Մանկաց եկեղեցւոյ մէջ, յաւարտ
Ս. պատարագի:

ԱՆԳԻՆԷ ՆԱՃԱՐԵԱՆԻ (ԾՆԵՎ՝
ԴԱԻԻԹԵԱՆ) մահուան Ա. տարեկի-
ցին առիթով, հոգեհանգստեան
պաշտօն պիտի կատարուի Կի-
րակի, 23 Յունիս 2002, Ս. Նշան
Մայր եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս.
պատարագի:

«ԱԶԳԱԿ»Ի
ՀԵՒՆԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱԶԳԱԿ»ի հետ կապուելու համար հեռազանգել
հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

ՍԱԿԱՐԱՆ

Table with 2 columns: Item description and Price. Includes items like Սուրիական թղթոսկի, Իրաքեան տինար, Պահրէյնեան տինար, etc.

Table with 2 columns: Item description and Price. Includes items like Անգլիական մէկ ոսկի, Իրանեան մէկ ոսկի, Օսմանեան մէկ ոսկի, etc.

Table with 2 columns: Item description and Price. Includes items like Ամբրիկեան տոլարի փոխանակման սակերը, Եւրօ, Քանադական տոլար, etc.

ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ

Table with 3 columns: Item description, Price, and another price. Includes items like Ա. կարգի 4 2/8, Բ. կարգի 4 4/8, Բաժնետիրութիւն

ՏԱՐԵՂԱՐՁԻ ԼԱՒԱԳՈՅՆ ՆՈՒԲԸ
ԱՅՍ ԱՄԻՍ ՅԱՏՈՒԿ ԳԻՆ
ԲՈՒՈՐ ԱՏԱՌԿ ՍԿՈՂ ԱՆՈՒՆԵՐՈՒՆ.
ԿԵՍ ԺԱՍՆՈՑ VIDEO CLIPՆԵՐ ԱՆՁԻՆ
ԱՆՈՒՆՈՎ, ՄԱԿԱՆՈՒՆՈՎ ԵՒ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆԿԱՐՆԵՐՈՎ
Դիմել՝ ԱՐԱ ԲԵԲԵՃԵԱՆ ՎԱՍ.
Ըեռ. 01 / 261696, 03 / 250518

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏԳԵՐԸ ☆

ԿԵՆՈՑ (21 Մարտին 20 Ապրիլ)

Բոլոր անոնք, որոնց պաշտօնը կապուած է կրթա-
կան աշխատանքի, պիտի իմանան անցնող տարուան
իրենց յաջողութեան լաւ արդիւնքը:

ԿՑՈՒԼ (21 Ապրիլին 21 Մայիս)

Ձեր կեանքին համար նոր ձեռք կը փնտռէք այս
առնչութեամբ կը սպասէք պատասխանի մը: Ձեր
սպասումին միջոցին մի՛ կարուիք դուրսի կեանքէն:

ԿԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսին 21 Յունիս)

Եթէ ձանձորոյթ ունենաք օրուան ընթացքին, ձեր
կնոջ, ամուսնոյն կամ մէկ հարազատին հետ գուարք
երեկոյ մը ունեցէք եւ գուարանաք:

ԿԵՑԳԵՏԻՆ (22 Յունիսին 23 Յուլիս)

Աշխատանքի մարզը այսօր փայլուն եւ արդիւ-
նաւետ պիտի չըլլայ, որովհետեւ պետք եղած ջան-
քը չէք կատարած: Սթափեցէք եւ գործի անցէք:

ԱՌԻԻԾ (24 Յուլիսին 23 Օգոստոս)

Եթէ կանոնաւոր մարզանք կատարող մը չէք, գո-
նէ քալեցէք ամէն օր՝ յարմար եւ ընդունելի կշռոյ-
րով. ասիկա պիտի բարելաւէ ձեր մարմինը:

ԿԿՈՑԱ (24 Օգոստոսին 23 Սեպտեմբեր)

Ձեր ընտանիքին անդամներէն ոմանք կամ ձեր
չըրջանակէն կարգ մը անձեր կը փափաքին, որ զի-
րենք յաճախ գնահատէք: Ատենի մը համար ըրէք
այս գովքը:

ԿԿՇԻՌՔ (24 Սեպտեմբերին 23 Հոկտեմբեր)

Ուսանողներու համար սքանչելի է օրը, միայն թէ
պէտք է մէկ կողմ կենան խառնակ մթնոլորտէ: Եթէ
աշխատող էք, նոյնպէս եղէք գործնական:

ԿԿՐԻՃ (24 Հոկտեմբերին 23 Նոյեմբեր)

Եթէ անդրադառնաք, որ կարգ մը մուրհակներ
կամ մասնավարներ պիտի չկարենաք վճարել նիշդ
մասնակին, այդ մասին տեղեակ պահեցէք խնդրոյ
տարակալ անձերը:

ԱՂԵՂՆԱՒՈՐ (24 Նոյեմբերին 21 Դեկտեմբեր)

Կարգ մը աշխատանքներ, գորս մէկ կողմ դրած
էիք ժամանակէ մը ի վեր, այսօր կրկին ձեռք պիտի
առնէք՝ զանոնք աւարտելու մտօք:

ԱՅԾԵՂՋԻՒՐ (22 Դեկտեմբերին 20 Յունուար)

Եթէ մտահոգութիւն մը ունիք առողջական գե-
տնի վրայ, գացէք բժիշկի մը բով, եւ ան պիտի կա-
տարէ պետք եղած ցուցումները: Մտահոգիչ հարց
չունիք:

ԿԾՈՎԱՆՈՑԸ (21 Յունուարին 19 Փետրուար)

Եթէ հարց մը ունիք ձեր մտքին մէջ, գացէք ձեզի
մօտիկ բարեկամի մը մօտ եւ անոր վստահեցէք ձեր
խնդրին լուծումը: Ան օտակար պիտի ըլլայ ձեզի:

ԿՉՈՒԿ (20 Փետրուարին 20 Մարտ)

Եթէ անել կարողութեան մը մէջ կը գտնուիք, ին-
չո՞ւ չէք երբբար մասնագետի մը բով՝ լուծելու ձեր
հարցը: Կ'ըսեն, թէ «խելքը խելքէն բարձր է»:

ՕՐԱՏԵՏՐ

Panasonic
ԸՆՈՒՍԵՍԻԼ
Image of a Panasonic television and speakers.

Table with 3 columns: Time, Program Name, and Channel. Includes programs like 10:00 - Սապահօ, 13:00 - Մարտի հանա, 16:30 - Թելե Սոնտիալ, etc.


ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5176

Table with 10 columns and 10 rows for lottery results. Includes header information like Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ.

# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

## ԱՇԽԱՐՀ

ՄՈՆԻՏԻՆԳ 2002



# ՊՐԱԶԻԼ - ԱՆԳԼԻԱ՝ 2-1 ԳԵՐՄԱՆԻԱ - Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐ՝ 1-0



Ռոնալտինիոյի Գեյնակած կողմ. գնդակը կ'ուղղուի դէպի Աճալիոյ բերդը

Մոնտիալի քառորդ արտաակա՛նի երկու մրցումները տեղի ունեցան երէկ, որոնց ընթացքին Պրաչիլի եւ Գերմանիա յաղթանակներ արձանագրելով՝ ապահովեցին կիսաւարտական փուլի հանգրուանին իրենց տոմարը:

Քառորդ արտաակա՛նի մնացեալ երկու ճակատումները տեղի կ'ունենան այսօր:  
Երէկուան առաջին մրցումը, որ տեղի ունեցաւ Շիպուոքայի մէջ (Ճապոն), վերջ գտաւ Պրաչիլի յաղթանակով. ան աւելի քան 47 հապար համակիրներու ներկայութեան 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց Անգլիան:

Երկու խումբերն ալ մրցումը սկսան գրեթէ առանց կայմակերպութեան յարձակումներ կատարելու: 23րդ վայրկեանին, սակայն, Մայքըլ Օուրոն աջողեցաւ նշանակել Անգլիոյ եւ մրցումին առաջին կողմ, օգտուելով յետասպահ Լուիսիոյ մէկ սխալին:

Այդ կողմն էտք, Պրաչիլի գրեթէ ինքզնու ճնշողը Տէյվիս Սիմոնի բերդին վրայ էր Ա. կիսախաղին կորուսած վայրկեաններուն ան նշանակեց իր հաւասարութեան կողմը, շնորհիւ Ռիվայտոյի, որ իր փոխանցումը ստացած էր Ռոնալտինիոյին:

Բ. կիսախաղին սկիզբը Ռոնալտինիո սքանչելի կողով մը (35 մեթրէն) պարտութեան մատնեց Սիմոնը, որ ոչինչ կրցաւ ընել, բացի դէպի բերդ ուղղուող գնդակը դիտել:

Իր նշանակած կողմն էտք վայրկեաններ, Ռոնալտինիո օրակա իրաւարար Ֆելիպէ Ռամոս Աիսույէն (Մեքսիքա) պարմանալիօրէն ստացաւ կարմիր քարտ մը: Երկու արժանի չէր: Այլ մրցումներու նմանօրինակ ֆաուլներ ընդհանրապէս տեղի կ'ունենան իրաւարարները կը գործածէին միայն իրենց դեղին քարտը:

Նշենք, թէ Սիմոն նմանօրինակ կողմը ստացած էր 1995ին Արսենալի հետ, երբ Ռեյալ Սարակոսա պարտութեան մատնած էր անոր կայմը, Երոպայի բաժակակիր խումբերու բաժակի մրցաշարքի արտաակա՛նին:

նեց ամերիկացի բերդապահ Պրետ Ֆրիտլըր:

Բ. կիսախաղին, ամերիկացի գտնուեցան անբախտ, որովհետեւ կրէկ Պերնալըրի կողմէ դէպի բերդ ուղղուող գնդակը, որ դպաւ գերմանացի յետասպահ Թորսթըն Ֆրինկլի ձեռքին, պարմանալիօրէն փենալթի չսուլուեցաւ սկովտիացի իրաւարար Հիու Տալասի կողմէ:

Մրցումէն ետք Միացեալ Նահանգներու մարզիչ Արենա ըսաւ. «Իրապէս հպարտ եմ իմ մարզիկներով. թէ-

գային խումբին նախկին խմբապետը եւ մարզիչ Ֆրանց Պերնալըրը, որ ըսաւ, թէ Գերմանիա բախտաւոր եղաւ, որ չպարտուեցաւ ամերիկացիներէն:

Իսկ յետասպահ Թորսթըն Ֆրինկլի հարցին անդրադարձաւ (ան գնդակը զսպած էր ձեռքով), Պերնալըրը պարտաւորաբար Տալասի անվարան պետք էր փենալթի սուլէր ի նպաստ ամերիկացիներուն:

### ԱՅՍՕՐՈՒՆ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

Քառորդ արտաակա՛նի մնացեալ երկու ճակատումները տեղի կ'ունենան այսօր, առաջինը՝ Հարաւային Բորնէալի մէջ, իսկ երկրորդը՝ Ճապոնի մէջ:  
Առաջին մրցումը, որ տեղի պիտի ունենայ Քվանկոնի մէջ, առաւօտեան ժա-



Փելէ, որ քննադատեց իրաւարարները

Մրցումէն ետք, երբ հարց տրուեցաւ Ռոնալտինիոյի, թէ անոր նշանակած կողմ փոխանցու՛մ էր, թէ դէպի կողմ հարուած մը, ան ըսաւ՝ հարուած, որովհետեւ խմբապետ Քաֆու իր ուշադրութեան յանձնած էր, որ Սիմոն իր սահմանէն բաւական դուրս ելած է...

Անգլիոյ ֆուլթայի ապագային խումբին մարզիչ շուէտացի

ապագային խումբին մարզիկները մրցումէն ետք մեծ գովասանքով արտայայտուեցան մրցակից կապմին նկատմամբ, սակայն անոնք ըսին, թէ իրենց մահացու հարուած տուողը եղաւ Ռիվայտոյի նշանակած կողմը, նկատել տալով, որ այդ մէկը տեղի չունենալու պարագային, Բ. կիսախաղին պատկերը ամբողջութեամբ շրջուած պիտի



Ֆելիպէ Ռամոս Ռիսո (Մեքսիքա) դաշտէն կը վտարէ Ռոնալտինիոն

Սվէն Կորան Էրիքսոն, իր կայմին կրած այս պարտութեան ակնարկելով, ըսաւ, թէ իր մարզիկներէն շատ աւելին կը յուսար. ան կ'ակնկալէր, որ մարզիկի մը առաւելութիւնը ունենալով՝ անոնք շատ աւելի դիրքութեամբ պիտի տիրապետէին մրցակիցին վրայ, սակայն պատահեցաւ հակառակը եւ Պրաչիլի ինքզնու տիրապետողը, մինչ Անգլիա գրեթէ կը մնար հանդիսատեսի դերին մէջ:  
Անգլիոյ ֆուլթայի

ըլլար, ինչպէս տ'Անգլիոյ:  
«Վկանակ իր երկրին խումբին արձանագրած այս յաղթանակին, Փելէ մնացած էր 2 0 0 2 ի Մոնտիալի ընթացքին ցարդ իրաւարարութեան մակարդակը գտաւ շատ «աղքատ»:  
«Ճիշդ է, որ իրաւարարները կը գործեն սխալներ, ինչպէս մենք, բայց նկատուի ունենալով, որ իրաւարարը մրցումին կարեւոր մէկ բաժինն է, պետք չէ նմանօրինակ սխալներ կատարել (ան կ'ակնարկէր Ռոնալտինիոյի ստացած կարմիր քարտին), որոնք կ'ըլլան անմարտելի: ՖիՖԱ պետք է մեծ ուշադրութիւն դարձնէ այս գծով, ապագային եւ յառաջիկայ մրցումներուն ընթացքին», կ'ըսէ Փելէ:

Օրուան երկրորդ մրցումը, որ տեղի ունեցաւ Ուլսանի մէջ (Հարաւային Բորնէալ), վերջ գտաւ Գերմանիոյ յաղթանակով. աւելի քան 37 հապար համակիրներու ներկայութեան, ան 1-0 արդիւնքով դժուարութեամբ պարտութեան մատնեց Միացեալ Նահանգները, որոնք շատ բացառիկ մրցում մը կատարեցին, թէեւ անբախտ գտնուելով՝ դուրս մնացին մրցաշարքէն: Մրցումին շարքէն կողմի հեղինակը հանդիսացաւ Միքայել Պալաք, որ 39րդ վայրկեանին գլուխով պարտութեան մատ-

նէ քիչ մը անբախտ եղանք: Մեկի ներկայացան կողմ նշանակելու բազմաթիւ առիթներ, իսկ Գերմանիոյ, կրնամ ըսել, միայն՝ երկու, որոնցմէ մէկը արդէն իսկ կողմ վերածուեցաւ:

Գերմանիա, որ երեք անգամ բարձրացուած է Մոնտիալի բաժակը, 12 տարուան մէջ առաջին անգամ ըլլալով ապահովեց կիսաւարտական հանգրուանին իր տոմարը: Նշենք, թէ Օլիվըր Բան այս մրցումին 50րդ անգամ ըլլալով կրէց Գերմանիոյ ֆուլթայի ապագային խումբին շաքիկը: Ան անցեալ շաբաթ տօնած էր իր ծննդեան 33րդ տարեդարձը:

Հակառակ իր կայմին արձանագրած այս յաղթանակին, սակայն, Գերմանիոյ մարզիչ Ռուտի Վէօլըր յայտնեց, որ թէեւ ուրախ է կիսաւարտական հանգրուանին տոմար ապահովելով, սակայն երբեք բաւարարուած չի զգար իր մարզիկներուն ցուցաբերած խաղարկութեամբ, որովհետեւ մրցակից կայմը շատ աւելի տպաւորիչ մրցում մը կատարեց քան Գերմանիա:  
Նմանօրինակ յայտարարութիւն մը կատարեց նաեւ Գերմանիոյ ֆուլթայի ապ-

մը 9:30ին, իրարու դէմ պիտի հանէ Սպանիան եւ իւրերկալ երկիրը՝ Հարաւային Բորնէալ: Մրցումին իրաւարար պիտի ըլլայ եգիպտացի Ժամալ Դանտուր, իսկ կողմի իրաւարարները՝ Ալի Թամուսանկէ (Ուկրաինա) եւ Մայքըլ Ռակուսաթ (Թրինիտատ):

Նախապէս երկու կայմերը իրարու դէմ յանդիման եկած են երկու անգամ, 1990ի եւ 1994ի Մոնտիալին: Առաջինին, Սպանիա 3 - 1 արդիւնքով յաղթանակ մը արձանագրած է, իսկ երկրորդ մրցումը վերջ գտած է հաւասարութեամբ:

Սպանիա 11րդ անգամ ըլլալով է որ կը մասնակցի Մոնտիալին, իսկ Հարաւային Բորնէալ՝ ճոր անգամ:

Քառորդ արտաակա՛նի հանգրուանի երկրորդ մրցումը տեղի պիտի ունենայ այսօր, կէսօրէ ետք ժամը 14:30ին, Օսաքայի մէջ, որուն ընթացքին Սենեկալ պիտի ճակատի Թուրքիոյ դէմ: Երկու կայմերը առաջին անգամ ըլլալով է որ իրարու դէմ յանդիման կու գան: Սենեկալ առաջին անգամն է, որ Մոնտիալին իր մասնակցութիւնը կը բերէ, մինչ Թուրքիա՝ երկրորդ (առաջինը՝ 1954ին):

Մրցումին իրաւարարն է քոլումբիացի

Օսքար Ռուիս, իսկ կողմի իրաւարարները՝



Կրէկ Պերնալըրի հարուածած գնդակը կը կասեցուի Թորսթըն Ֆրինկլի կողմէ (Ճապոն), բայց իրաւարար Հիու Տալասի ամերիկացիներուն ի նպաստ կը զգաւարար փենալթից

Խոխէ Ռաթայինս (Արժանաբան) եւ Միկէլ Ճիւրնուլի (Փարակուէ):  
Նշենք, թէ Սպանիա - Հարաւային Բորնէալ մրցումին յաղթանակը

կիսաւարտականի պիտի ճակատի Գերմանիոյ դէմ, իսկ Սենեկալ - Թուրքիա մրցումին յաղթանակը Պրաչիլի դէմ:

## ՃԱՏՐԱԿ

1

ՍԵՒԵՐԸ ԿԸ ԽԱՂՆ ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐԺՈՒՄՈՎ

ՍԱՐԱՆԹՈՒՆԿԱԼԱԿԱՍ. - ԷՆԺԱՐԿԱԼԻ. (2002)

2

ՃԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ԽԱՂՆ ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐԺՈՒՄՈՎ

ԶՈՒՂԵԹԹԻ Ա. - ՈՒՍՏՐԵԶ Մ. (2002)

3

ՍԵՒԵՐԸ ԿԸ ԽԱՂՆ ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐԺՈՒՄՈՎ

ՈՒՍՏՐԵԶ Մ. - ԳԱԼԵ Մ. (2002)

4

ՃԵՐՄԱԿԵՐԸ ԿԸ ԽԱՂՆ ԵՒ ՄԱԹ 2 ՇԱՐԺՈՒՄՈՎ

ԱՐԹՐ ՌԻԼԻՍԵԹ (2002)

**Հ.Մ.Ը.Մ. ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏԻ ՄԱՍՆԱԳԻՒՂ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ**

Տեղի կ'ունենայ Երկուշաբթի, 24 Յունիս 2002, երէկոյեան ժամը 8:00ին, «Ալիբեան» ակումբին մէջ:

ԾԱՆՕԹ.- Ներկաներուն թիւը մեծամասնութիւն պիտի համարուի երէկոյեան ժամը 8:30ին:

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

**ԼՕԽԻ «ՆԱՅԻՐԻ» ՄԱՍՆԱԳԻՒՂ (ԱՆԹԻԼԻԱՍ) ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ**

Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 25 Յունիս 2002, առաւօտեան ժամը ճիշդ 9:30ին, Աղբալեան ակումբի «Սերժ Թովմասեան» սրահին մէջ:

**ԾԱՆՕԹ.- Ընկերուիներուն ներկայութիւնը խիստ փափաքելի է:**

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Խնդիրներուն լուծումը տեսնել՝ 10րդ էջ

Այս սիւնակը պատրաստեց՝ Էլի Հուլիշեան

ԿԻՊՐԱԿԱՆ ՀԱՐՑ

ՅՈՅՆ ԿԻՊՐԱՑԻՔ ԿԸ ՀԵՐՔԵՆ ՏԵՆՔԹԱՇԻ ԱՍԲԱՍՏԱՆՈՒԹԻՒՆԸ

Յոյն կիպրացիք հերքած են թուրք կիպրացի դեկավար Ռաուֆ Տենքթաշի այն ամբաստանությունը, թե կը փորձեն խաղաղարար բանակցությունները ձախողության մատնել:

Կառավարության բանբերը՝ Միքայիլ Փափափեթրու յայտնած է, որ կառավարությունը կ'ուզի միջին եզրի խաղաղ լուծում մը՝ առաջարկուած ՄԱԿի համաձայնագրէն հարհուրդին եւ պահանջուած՝ միջազգային օրէնքին կողմէ:

Փափափեթրու, որ Կիպրոսի նախագահ Կլաֆթոս Բլեթիտէսի մէկ խորհրդակցան է, շեշտած է, որ յունական կողմը չ'ուզէր, որ բանակցությունները ձախողին, այլ «կ'ուզէր, որ անոնք յաջողին եւ կարելի ամէն ինչ պիտի ընենք այդ ուղղութեամբ»:

Տենքթաշ կը հակադարձէր յոյն կիպրական իրատու աղբիւրներու տեղեկագիրներուն, որոնք կ'ըսէին, թե Կիպրոսի բանակցությունները յառաջդիմութիւն չեն արձանագրեր իր անվիջող կեցումովն պատճառով:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՊԱՂՏԱՏ ՏԱԿԱԻՆ ԿԸ ՍՊԱՍԷ ԱՊԱՆՈՎՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐՈՒՆ

Իրաքեան օրաթերթ մը երէկ կը գրէր, որ ՄԱԿի հետ բանակցություններու նոր հանգրուանին յաջողութիւնը կախեալ է Ապահովութեան Խորհուրդին ներկայացուած հարցումներուն պատասխաններէն:

«Սաուրա» դիտել տուաւ, որ ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անան պէտք է աշխատանք տանի, որպէսզի Ապահովութեան Խորհուրդը պատասխանէ Իրաքի ներկայացուած հարցադրումներուն: «Սաուրա» շեշտեց, որ բանակցություններուն յառաջիկայ փուլը անհիմատ ու ապարդիւն պիտի ըլլայ, եթէ Իրաք պատասխանները չստանայ:

Պաշտատ շարք մը հարցումներ ներկայացուցած է Ապահովութեան Խորհուրդին՝ պատժամիջոցները եւ «արգիլեալ գօտիներ»ը ջնջելու ժամանակացոյցին մասին, ինչպէս նաեւ Սաուրա՝ Հիւսէյնը տապալելու ամերիկեան ծրագիրներուն մասին՝ յուսարանութիւն պահանջելով: Անան, որ Ապահովութեան Խորհուրդին կողմէ լիազօրուած է բանակցութիւն յիշեալ հարցերուն մասին, հարցումները փոխանցած է, սակայն ցարդ պատասխաններ չէ ստացած:

ՄԱԿի վէնքի քննիչներուն վե-

(ՌՈՅԹԸՐԸ)

ՔՈՑԻ ԱՆԱՆ ԱՆԻՄԱՍ ԿԸ ԿԱՍԷ ՈՒՎՇԻՆԿԹԸՆԻ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անան անհիմատ նկատած է Ուաշինկթընի մտահոգությունները, թե ամերիկացի խաղաղարար ուժեր կրնան ձերբակալուիլ եւ դատաւարան հետապնդողներու ենթարկուիլ նոր Ոճրադատ Միջազգային Ատեանին կողմէ, ըսելով, թե որեւէ հարց չի տեսներ:

Սակայն ամերիկացի պաշտօնատարներ յայտնած են, թե քաղաքական դրդապատճառներով դատական հետապնդումներու սպառնալիքը համոզած է Աֆղանիստանի մէջ միջազգային ապահովութեան ուժերուն պիտուր տրամադրած երկիրները, թե միջազգային ատեանին գծով պէտք է անձեռնմխելիութիւն ձեռք բերեն բանակցութեանց ճամբով:

Ուաշինկթընի ամէնէն սերտ դաշնակիցներէն շատեր ուժեր ունին Աֆղանիստանի մէջ: Միջազգային այդ ուժը Յունուարին իր պիտուրներուն համար անձեռնմխելիութեան համաձայնութիւն մը պահոված է Աֆղանիստանի փոխանցման կառավարութեան հետ:

Այդ երկիրներէն շատեր այժմ կը քննադատեն Ուաշինկթընը, որ կը փորձէ նոյն բանը ընել իր սեփական խաղաղարար պիտուրներուն համար՝ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին ճամբով, ըսած են ամերիկացի պիտուրներ:

Երուպացիք խստի քննադատած են ամերիկեան ծրագիրները՝ Ա. Խորհուրդի բանաձեւի մը ճամբով ամերիկացի պաշտօնատարներ եւ պիտուրներ հեռու պահելու միջազգային ատեանին հասողութեան:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՌԻԱՇԻՆԿԹԸՆԻ ՀԱՄԱՁԱՅՆ՝ ԱՔԻԱԶԻՈՅ ՄԷՋ ԽԱՂԱՂԱՐԱՐ ՌԻՇԵՐՈՒ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ 6 ԱՄԻՍՈՎ ԵՐԿԱՐԱԶԳՈՒԵՑԱԻ

Միացեալ Նահանգներ անջատողական Արխայիոյ մէջ շրջանային խաղաղարար ուժերու առաքելութիւնը 6 ամիսով երկարաձգելու ի նպաստ արտայայտուած է:

Խաղաղարար ուժերը Արխայիա կը գտնուին 1994էն ի վեր՝ Անկախ Պետութիւններու Հասարակապետութեան հովանաւորութեամբ: Անոնք ներկայիս միայն ռուս շուրջ 1500 պիտուրներ կը հաշուեն:

Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան բանբերը՝ Ռիչըրտ Պաուլըր գրաւոր յայտարարութեան մը մէջ ըսած է, թե Ուաշինկթընը պարտաւոր կը կանգնի ուժերուն սպասարկութեան ժամանակաշրջանը 6 ամիսով երկարաձգելու: Անկախ կ'արտաբերէ Յունիսի վերջը:

«Կրաստանի նման, Մ. Նահանգներ կ'ուզեն դէպի քաղաքական բանակցություններ արագ յառաջդիմութիւն տեսնել՝ Արխայիոյ գծով տագնապը լուծելու եւ տեղահանուած մարդիկը տուն վերադարձնելու համար», յայտնած է ան:

Յայտարարութիւնը երկու կողմերուն կոչ ուղղած է, որ տիպովի ձեռնարկին՝ անլոյծ հարցերը լուծելու նպատակով:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՊՈՒՇ ԿՈՉ Կ՝ՈՒՂՂԷ ՎԵՐՋ ՏԱԼ ՍՈՒՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

Միացեալ Նահանգներու նախագահ Ճորձ Պուշ կոչ ուղղեց Սուտանի կառավարութեան՝ վերջ տալու 19ամեայ քաղաքացիական պատերազմին, որովհետեւ Խարթումի իշխանութիւնները չեն կրնար մէկ կողմէն խաղաղութեան բանակցություններ կատարել եւ միւս կողմէ՝ շարունակել պատերազմը հարաւի դէմ: Պուշ, որ իր խօսքին

մէջ յայտարարեց նաեւ, թե յառաջիկայ տարի Ափրիկէ պիտի այցելէ վերջ տալու համար շրջանային պատերազմներուն, ըսաւ, որ Սեպտեմբեր 11ի դէպքերէն ի վեր Սուտանի կառավարությունը օգտակար մասնակցութիւն ունեցած է սիւնապետութեան դէմ յայտարարուած արշաւին: Բայցեւայնպէս Խարթումի իշխանութիւններէն տակա-

(ՌՈՅԹԸՐԸ)

ԱՍՏԵՂԱԿԵՐՊ ՄԸ ԵՐԿՐԱԳՈՒՆԴԻՆ ՍՕՏԷՆ ԱՆՑԱԾ Է...

Յուրպոյի դաշտի մը մեծութեամբ աստեղակերպ մը Յունիս 14ին երկրագունդին մօտէն անցած է՝ յուսինէն շատ անելի կարճ հեռաւորութեան մը, ըսած են գիտնականներ, աւելցնելով, որ անիկա տասնամեակներէ ի վեր անջուրպետային մեծագոյն ժայռն է, որ մեր երկրին այդքան մօտէն կ'անցնի: 2002 Էժ. Է. սաստեղակերպը մինչեւ անցեալ Երկուշաբթի օր չէ նկատուած, այսինքն՝ երկրագունդին անոր առաւելագոյնս մօտենալէն 3 օր ետք:

Աստեղակերպը, որ երկրագունդին 120 հազար քիլոմետր հեռաւորութեան վրայ երկվայրկեանը շուրջ 10 քիլոմետր արագութեամբ կը սուրար, այժմ արդէն քանի մը միլիոն քիլոմետր հեռու է:

50 մետրէն 120 մետր տրամագիծով ժայռը եթէ բախեր երկրագունդին, ընդհանրական աղէտ պիտի չի պատճառէր, սակայն անիկա պիտի կարենար տեղական առումով քանդուծ յառաջացնել, ինչպէս պատահած է 1908ին Սիպիերիոյ մէջ, ուր 200 քառակուսի քիլոմետր անտառ ոչընչացած է:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Շարունակուած 3րդ ԷջԷԳ

նոր յարձակումներէ, մինչ Սպիտակ Տունը 10 վայրկեանի համար պարպուած է, որովհետեւ անձանօթ փոքր օդանոս մը մօտեցած էր անոր: Նի Եորքի իշխանութիւնները մտահոգ են, որ հաւանաբար կարգեր կամ հրշէջներու ինքնաշարժներ օդաւործութիւն ահաբեկչական գործողութիւններու համար:

Պաղեստինեան հարցին վրայ կեղծարանայով, լիբանանեան օրաթերթերը գրած են, թէ պաղեստինեան քոմանտո մը հրէական բնակեցման վայրի մը վրայ յարձակեցաւ եւ 5 անձեր սպաննեց: Ըստ անոնց՝ Արիել Շարոն բանակի պահեստի ուժերը կորաշարժի են:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ...

Շարունակուած Ա. ԷջԷԳ

դրուելու առիթ չունեցաւ, որովհետեւ մինչ այդ ծայր տուած էր Աքաալի ինքիֆտաան: Միացեալ Նահանգներու նոր նախագահ Ճորձ Պուշ, ինչպէս նաեւ Խորալի վարչապետ Արիել Շարոն իշխանութեան հասնելէ ետք յայտարարեցին, որ Քլինթընի ծրագիրը ի գօրու չէ եւ թէ ամէն ինչ գերոյն պէտք է սկսի: Պաղեստինցիները սակայն կը պահանջեն, որ բանակցութիւնները վերսկսի այն կէտէն, ուր հասած էին Շարոնէն առաջ:

Միւս կողմէ, Միացեալ Նահանգներ յայտնեցին, որ իսրայէլացի քաղաքայիններու դէմ յարձակումները դադրեցնելու Արաֆատի գրաւոր պահանջը բաւարար չէ վերջ տալու վարչապետութեան ալիքին: Արտաքին գործոց նախարարութեան կողմէ հրապարակուած յայտարարութիւն մը դիտել տուաւ, որ Ուաշինկթընը կը պահանջէ, որ Արաֆատ եւ պաղեստինեան իշխանութիւնը յատակ ոճ մը պէտք է որդեգրեն անարեւելիական գործողութիւններուն դէմ: Յայտարարութիւնը դրական նկատեց Արաֆատի գրաւոր պահանջը, որ սակայն կը մնայ անբաւարար:

● ԻՍՐԱՅԷԼԻ մէջ այս շաբթուան ընթացքին կատարուած հարցախոյզի մը արդիւնքները ցոյց կու տան, որ իսրայէլացիներուն մեծամասնութիւնը գորակից կը կանգնի ապահովութեան պարիսպի ծրագիրին, որ պիտի բարձրանայ Այսրոյրդանանի շուրջ:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՀԱՏՐԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐՈՒՆ ԼՈՒՇՈՒՍԸ

- 1. 1...h6+ 2.ϕh4 [2.ϕh5 ϕh2#] 2...ϕh2# 0-1
2. 1.ϖd8+ ϕe6 2.ϖd6# 1-0
3. 1...ϕh1+ 2.ϖg1 ϕxg1# 0-1
4. 1.ϖf5 Ed4# (#1) 1...b2 [1...dxc5 2.ϖc7#; 1...ϕd3 2.ϕe4#; 1...ϕe4 2.ϕe4#; 1...ϖf4 2.gxf4#; 1...ϖxe7+ 2.ϖd7#; 1...ϖxf5 2.ϖxf5#; 1...ϖxg4 2.ϖxg4#; 1...ϖxd5+ 2.ϖc6#] 2.d4#

Goood !! Buy a 43", 50" or 61" Toshiba Projection TV and get either a DVD player or a 21" TV for FREE\*. DVD or 21" TV \* till June 30th